

ցեալ դարու վարպետ արծաթագործնե-
րու:

Ու մինչ Անարատ Յղութեան Գոյրերու
երգչախումբը դարձեալ լսելի կ'ընէր ազ-
գային ժողովրդական ու եկեղեցական եր-
գեր, Կոմիտասեան քառաձայն դաշնաու-
րումով, Սրբազան Քահանայապետին կը
մատուցուէին ուրիշ վարդ մը նուէրներ:
Միաբանութեան կողմէ՝ Ուխտիւ Ընդհ.
Արքայազրը կը նուիրէր Շարական Հա-
յաստանեայց Եկեղեցւոյ փառակազմ հա-
տորը, եւրոպական ձայնագրութեամբ
հրատարակուած Երաժշտագէտ Հ. Ղեւոնդ
Վրդ. Տաշեանի կողմէ: Գերպո՞. Կիւրեղ
Ձոհրապեան կը ներկայացնէր չքեղ Պա-
տարագամատոյց մը, տպուած վեհապետի,
անցեալ տարի, որ կ'ամփոփէր Ս. Պա-
տարազի երգեցողութիւնները, մասնաւո-
րապէս պատարազիչին մասերը՝ Կարնոյ
աւանդական եղանակներով, եւրոպական
ձայնագրութեամբ, պատրաստուած նոյն
ինքն նուիրատու Գերապայծառին կողմէ:
Իսկ Անարատ Յղութեան Գոյրերու Ընդհ.
Մեծաւորուհին՝ Մայր է. Պոյաճեան կը
նուիրէր, յանուն իր Միաբանութեան,
ասղնեգործ նրբահիւս շապիկ մը Ս. Պա-
տարազի, աշխատանք՝ Միաբանութեան
Գոյրերուն եւ աշակերտուհիներուն:

Ամէնէն վերջ յուզումով խօսք կ'առնէր
ինք Սրբազան Քահանայապետը, եւ սի-
րազեղ ու ընտանի շնչով, իրեն յատուկ
հայրական մտերմութեամբ եւ յաճախակի
սրամտութիւններով, նախ կը յայտնէր իր
խորին շնորհակալութիւնը այդ ընտիր նը-
ւէրներուն եւ զեղեցիկ երգերուն համար,
որոնք այնքան ճաշակով օծուն ներկայա-
ցուած էին: Ծառը արդէն իսկ իր ամբող-
ջութեամբ մեր ընթերցողները տեսան թեր-
թիս առաջին էջերուն վրայ. ուր նկատե-
ցին անշուշտ որ պաշտօնական ճառ մը ըլ-
լալէ աւելի, ատիկա մտերմ խօսակցու-
թիւն մըն էր, հայրական յորդորներով եւ
հայկական յիշատակներով ընդունուած,
ուզողուած իր սիրելի Հայերուն, մարտի-
րոս ժողովուրդի մը զաւակներուն, որոնք
աւանդապահներն են կրօնական ու մշակու-

թային հսկայ գանձերու. եւ ատոր հա-
մար՝ կրկնապէս սիրելի Սրբազան Քահա-
նայապետին:

Իր յիշատակներուն մէջ մասնաւոր տեղ
մը, անջնջելի տեղ մը գրաւած է Յովա-
կիմեան Սրբազանի մասնագէտը, զոր նա-
խապէս մեղի ալ պատմած էր աւելի մը-
տերմական շրջանակի մը մէջ՝ երբ տա-
կաւին վեհապետի Պատրիարք էր: Նշա-
նակալից դէպք մըն է ատիկա եւ ցոյց կու
տայ թէ ինչպէս իսկական Հայը, աննա-
խապաշար ու անկեղծ հայ եկեղեցականը
գիտէ յարգել Հոռոմի Ս. Աթոռը, եւ փո-
խադարձաբար նոյն սիրալիր ընդունելու-
թիւնը կը գտնէ: Մեր լուսամիտ Հայրա-
պետներու վարդապետութեան յաջորդա-
կան շառաւիղը մատնանշող պատմական
օղակ մըն է Յովակիմեան Սրբազանի մաս-
նագէտը, որ գործնականօրէն կը դաւանի
հաւատքը Լուսաւորչեան, նուիրական ժա-
ռանդութիւնը Շնորհալիներու, Ձուլայի-
ցիներու եւ Նահապետներու, որոնց մասին
երկարօրէն խօսուած է մեր նախորդ թի-
ւին խմբագրականին մէջ:

Սրբազան Քահանայապետին այս մաս-
նաւոր ուշադրութիւնը եւ գնահատանքը
Յովակիմեան Սրբազանի հանդէպ՝ թող
բոլորին ապացոյց ըլլայ թէ Հոռոմի Ս. Ա-
թոռը որքան սիրալիր աչքով կը նայի
դէպի բովանդակ հայութիւնը, եւ կը տեն-
չայ որ ամէնքը ձուլուին հաւատքի կա-
տարեալ միութեան մէջ, հետեւելով Քրիս-
տոսի նուիրական պատուէրին:

Սրբազան Քահանայապետին խօսքերէն
վերջ, խմբերգն ու բոլոր ներկաները միա-
բերան կ'երգէին ՀԱՅՐ ՄԵՐԸ. հուսկ
Սրբո՞. Քահանայապետը կ'իջնէր իր դա-
հէն, կը մտնէր ժողովուրդին մէջ. բացա-
ռութիւն, որ միայն ի սէր Հայերուն նե-
րելի է՝ յայտարարելով. նաեւ կը լուսա-
նկարուէր խումբին հետ:

Ողբերգութիւնը կը թռչէր սրտէ սիրտ,
յիշատակներ կ'արթնային ամէն հայր-
դիի հոգւոյն խորը, մինչ Սրբազան Քա-
հանայապետը ընդհանուր ողբերգութեան
մէջ կը թողուր սրահը:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԹՈՒԱԿԱՆԸ ԵՒ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

«Քանզի ոչ է պատմութիւն ճշմարիտ՝ առանց
ժամանակագրութեան» (Խորեն. Բ, 4բ):

Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրու-
թեան կամ Հայոց պաշտօնական դարձի
թուականը կարելի է ըսել թէ ստոյգ թը-
ւականներէն մին եղած է, եւ ընդհանրա-
ցած կարծիքին համաձայն՝ 302 կամ 304
տարին համարուած: Այսպէս սահմանած
էին երկու հեղինակաւոր պատմագիրներ.
Չամչեան՝ 304ին, Օրմանեան՝ 302ին: Եւ
այս երկուքին ալ ուղեցոյց կը հանդիսա-
նար Մովսէս Խորենացիի հետեւեալ յայ-
տարարութիւնը. «Մանրախոզիւ քնեալ
գտաք զթագաւորելն Տրդատայ յերրորդ
ամի Դիոկղետիանոսի»¹. Իսկ Գրիգոր Լու-
սաւորչի ձեռնադրութեան թուականին
համար նոյնքան բացայայտ եւ հանդիսա-
ւոր կերպով կ'ըսէր. «Յեւթն եւ տասնե-
րորդ ամի թագաւորութեանն Տրդատայ
գտաք նստեալ յաթոռ սրբոյ առաքելոյն
Թադէոսի զնախահայրն մեր Գրիգորի-
րիոս»²: Արդ, յայտնի ըլլալով Դիոկղե-
տիանոսի թագաւորութեան տարին, որ է
284, զիւրին էր գտնել Տրդատի թագաւո-
րութեան թուականը՝ 287, եւ անով ալ
Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան
տարին՝ 304. կամ հաշուի չառնելով եր-
րորդ եւ 17րդ տարիները՝ կ'ունենանք 302
թուականը:

Սակայն այս վերջին տասնեւհինգ տա-

րիներու ընթացքին՝ բազմաթիւ ուսում-
նասիրութիւններ նուիրուեցան Գրիգոր
Լուսաւորչի ձեռնադրութեան կամ Հայոց
դարձի թուականը ճշտելու. եւ արդիւնքը
այն եղաւ, որ մինչեւ հիմա ընդհանրացած
թուականին փոխարէն՝ ունեցանք չորս
նոր եւ իրարմէ բոլորովին տարբեր թը-
ւականներ:

Ստ. Մալխասեան, 1944ին, «Էջմիածին»
թերթին մէջ հարց կը դնէր թէ «Երբ են
Հայերը ընդունել Քրիստոնէութիւնը» եւ
կը պատասխանէր՝ 279ին³:

Հ. Ն. Ակիմեան, 1949ին, Գրիգոր Լու-
սաւորչի վրայ գրած իր ուսումնասիրու-
թեան մէջ՝ Հայոց դարձին թուականը գեո-
աւելի կանխելով կը տանէր 219ին⁴:

Ե. Քասունի, 1957ին, «Ակոս» թերթին
մէջ ճշտելով հայ Արչակունի թագաւոր-
ներու ժամանակագրութիւնը, Գրիգորի
ձեռնադրութեան թուականը կը գետեղէր
294ին⁵:

Միեւնոյն տարին լոյս տեսած Յ. Մա-
նանդեանի «Քննական տեսութիւն հայ ժո-
ղովրդի պատմութեան» Բ. հատորին մէջ՝
Հայոց դարձի թուականին համար բոլոր-
ովին նոր տարի մը կ'որոշուէր, այն է
314/56:

Ինչպէս կը տեսնէք, ընդհանրացած կար-

1. Մ. Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, (Բ,
2Բ.) վեհապետի 1881, էջ 345-346:
2. Մ. Խորենացի, Անդ, (Բ, ՂԱ.) էջ 376:
3. Ստ. Մալխասեան, Երբ են Հայերը ընդունել
Քրիստոնէութիւնը, «Էջմիածին», Ա, (1944),
էջ, 22-26:
4. Հ. Ն. Ակիմեան, Ս. Գրիգոր Լուսաւորչի,
«Հանդ. Ամս.» ԾԳ. (1949), էջ 3-58:

5. Ե. Քասունի, Ժամանակագրական ճշտումներ
հեթանոս հայ Արչակունաց պատմութեան,
«Ակոս», ԺԳ. (1953) թիւ 3, 4, 5, 6, 7: Խո-
սքով մեծի եւ Տրդատի մասին են:
6. Յ. Մանանդեան, Քննական տեսութիւն հայ
ժողովուրդի պատմութեան, Հատ. Բ, մասն
Ա. Երեւան, 1957, էջ 116-136: Յատկապէս էջ
127:

ծիքն զուրս՝ չորս տարբեր թուական կայ այժմ Հայոց դարձի տարին որոշող: Բընական էր հարց դնել եւ քննել թէ ո՞րն է ասոնցմէ ամէնէն հաւանականը կամ ըստոյդը:

Բայց նախ քննենք թէ ի՞նչ է պատճառը այս զանազանութեան կամ կարծիքներու տարբերութեան: Յետոյ աւելի մանրամասն պիտի ներկայացնենք վերոյիշեալ կարծիքներու փաստերն ու պատճառները. պիտի հետեւի հերքումը այն բոլոր կարծիքներուն, որոնք բաւարար եւ դոհացուցիչ պատճառներ չեն բերեր փաստելու իրենց վարկածը: Հուսկ պիտի պաշտպանենք ու ներկայացնենք մեզի հաւանական տեսնուած կարծիքը:

ԿԱՐԾԻՔՆԵՐՈՒ

ԶԱՆԱԶԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Դժուար է կռահել թէ ի՞նչ է պատճառը կարծիքներու այսքան զանազանութեան՝ թուականի մը շուրջ, որ պատմական կարեւոր եղելութեան մը կապուած է: Մեր պատմական աղբիւրներու անբաւարարութիւնն է ատիկա, եւ անոնց տուած տեղեկութիւններու զանազանութիւնը:

1. — Գլխաւոր աղբիւրը Ագաթանգեղոսն է, որ կը ներկայացնէ Ս. Գրիգորի կեանքը եւ Հայոց դարձը: Եւ ճիշտ այս աղբիւրին մէջ կը պակսի ժամանակագրութիւն մը՝ բառին սեղմ իմաստով: Իր տրուած տեղեկութիւններուն վրայ է որ պատմադէտները ջանացած են կազմել ժամանակագրութիւն մը:

Արդ, Ագաթանգեղոսի պատմութեան մէջ՝ ժամանակագրական հիմ կը ծառայէ Արտաշիւր Սասանեանի ապստամբութեան զէպքը, որուն յիշատակութեամբ կը սկսի Ագաթանգեղոս իր պատմութիւնը: Այս ապստամբութիւնը, որ Արեւելքի պատմութեան համար մեծ նշանակութիւն ունեցող եղելութիւն էր, պատահած է 224ին: Ագաթանգեղոս այս ապստամբութեան ժամանակակից կը համարի խոսքով Հայոց արքան, որ պաշտպան կը կանգնի իրենց ցեղակից Պարթեւներու Արշակունի ընտան

նիքին, եւ անոնց վերջին թագաւորին՝ Արտաւանի մահուան վրէժը լուծելու համար կը պատերազմի ապստամբ Արտաշիւրի դէմ: Շքեղ յաղթանակէ մը վերջ՝ տասը տարի շարունակ կ'ասպատակէ Պարսից երկիրը, մինչեւ որ Արտաշիւր պարգեւ կը խոստանայ այն մարդուն որ սպաննէ խոստանալով արքան: Անակ, պարթեւ ցեղէն իշխան մը, Հայաստան կու գայ եւ դաւաճանութեամբ կը սպաննէ Հայոց թագաւորը: խոսքովի որդիներէն մէկը, փոքրիկ Տրդատը, հայ նախարարներու ձեռքով կը փրկուի, եւ Յունաց կողմը կ'ապաստանի: Մինչ պարսիկներ կու գան զրաւելու Հայաստանը:

Արդ, հետեւելով Ագաթանգեղոսի պատմութեան, պատմադէտները կը համարին թէ հոս պատմուած է 224-252 տարիներու պատմութիւնը: 224՝ Արտաշիւրի ապստամբութեան տարին. իսկ 252՝ Պարսից Հայաստան մտնելու թուականը, համաձայն օտար պատմիչներու տեղեկութեանց⁷:

Թէ ո՞րքան ատեն Տրդատ Յունաց կողմը մնացած է՝ Ագաթանգեղոսի պատմութեանէն յայտնի է: Տրդատ իր երկիրը կը վերադառնայ, Գոթաց թագաւորին հետ՝ Յունաց կայսեր փոխան՝ մենամարտելէ յետոյ. յաղթութենէն վերջ՝ կայսրը կը վարձատրէ զինք, Հայոց թագաւոր կարգելով, եւ կը զրկէ Հայաստան, որպէսզի իր հայրենի դահը ժառանգէ: Այդ ժամանակ՝ Գրիգոր Լուսաւորիչ ալ Տրդատի հետ Հայաստան կու գայ. կը յայտնուի Գրիգորի քրիստոնեայ ըլլալը, եւ այդ պատճառով՝ երկար կը շարժարուի Տրդատէն, հուսկ կը նետուի խոր վիրապ, ուր կը մնայ 13 տարի: Ո՞վ էր Յունաց կայսրը, որ Տրդատը Հայաստան զրկած է. Ագաթանգեղոսի պատմութեանէն յայտնի է: Սակայն պէտք է նշադրել Դիոկղետիանոս, քանի որ Ս. Գրիգորի վիրապ նետուելէն վերջ՝ պատմութիւնը կը շարունակուի Հոփիսիմեան փոյսերու Հա-

7. Հմմտ. Մանանդեան, Անդ, էջ 83-85:

յաստան փախուստով, որուն մէջ կը յիշուի Դիոկղետիանոսի անունը: Ասով՝ ըստ ինքեան Տրդատի թագաւորութեան թուական մը պէտք էր որոշուի, բայց Դիոկղետիանոս (284-305) 21 տարուան թագաւորութեան շրջան մը ունեցած է: Ագաթանգեղոսի տուեալներով՝ կարելի է ստուգել Տրդատի թագաւորութեան սկիզբը, որմէ կարելի ըլլար հետեւցնել նաեւ Գրիգորի Հայաստան գալուն, խոր վիրապէն ելլելուն, Հայոց քրիստոնէութեան դարձին եւ Գրիգորի Կեսարիա երթին թրուականները: Որովհետեւ այս բոլոր զէպքերը Ագաթանգեղոսի մէջ կապուած են Տրդատի թագաւորութեան սկիզբի թուականին հետ:

2. — Բայց ահա Մ. խորենացի կու գայ վկայելու թէ «Մանրախոզիւ քննեալ զըտաք զթագաւորին Տրդատայ յերրորդ ամի Դիոկղետիանոսի»⁸. եւ քիչ վերջ Ս. Գրիգորի ձեռնագրութեան համար կը վրկայէ «Յեթն եւ տասներորդ ամի թագաւորութեանն Տրդատայ զտաք նստեալ յաթոս սրբոյ առաքելոյն Թադէոսի զնախահայրն մեր Գրիգորիոս»⁸: խորենացիի պատմական այս երկու վկայութիւններու վրայ հիմնուած՝ երկար ատեն Տրդատի թագաւորութեան սկիզբը համարուած էր 287 տարին, իսկ Գրիգորի ձեռնագրութեան թուականը՝ 302 կամ 304, ինչպէս ըսինք վերեւ:

3. — Սակայն Կրնար հարց դրուի՝ թէ խորենացիի այս երկու վկայութիւնները արդեօք վաւերական աղբիւրէ՞ կու գան, թէ արդեւնք են իր անձնական քննութեան, ինչպէս կ'ընէին առաջին վկայութեան մէջ մանրախոզիւ բնեալ բացատրութենէն: Եւ եթէ ի՞ր քննութեան արդիւնք են՝ Դիոկղետիանոս թագաւորի տարիները խորենացիի մօտ կը համապատասխանե՞ն արդեօք մեր ունեցած թուականներուն, այսինքն՝ Դիոկղետիանոս 284ին թագաւորած է խորենացիի համաձայն ալ, թէ ոչ: Ահա հարց մը, զոր մանրամասն քնն-

նելով՝ Մալխասեան հասած է այն եզրակացութեան թէ խորենացիի քով Դիոկղետիանոսի թագաւորութեան առաջին տարին 260 էր. ուստի Տրդատի թագաւորութեան սկիզբը կ'ըլլայ 263. իսկ Հայոց դարձի տարին 279: Հետեւաբար խորենացիի ժամանակագրական առաջին վկայութիւնը արդէն իսկ երկու տարբեր լուծումներու կ'առաջնորդէ:

4. — խորենացիի երկրորդ վկայութեան նկատմամբ, որ Գրիգորի ձեռնագրութիւնը կը կապէ Տրդատի 17րդ տարին, բանասէրներու մէջ աւելի համերաշխութիւն կայ. զրեթէ ամէնքը անոր վաւերականութիւնը կ'ենթադրեն: Բայց այդ թուականը ճշտելու համար՝ հարկ է Տրդատի թագաւորութեան առաջին տարին ստուգել, եւ այս նպատակով՝ կը դիմեն պատմական ուրիշ վկայութիւններու ալ:

Այսպէս Ուխտանէսի մօտ կայ վկայութիւն մը, որուն համաձայն՝ Տրդատ թագաւոր եղած ըլլալու է Պրորոս կայսեր ժամանակ: Ուխտանէս այս վկայութիւնը դրած է Զենոբ պատմիչի մօտ, որ մեզի ծանօթ Զենոբ Գրակի պատմութեան հետ նոյն ըլլալու է: Ուխտանէս կը գրէ. «Գրեցաք ի մերումս պատմութեան միանգամ եւ երկեցս յաղագս Տրդատայ թագաւորելոյն, թէ ե՞րբ եւ յորո՞ւմ ժամանակի եղեւ: Բայց ոչ միաբանէին ընդ միմեանս Զենոբ եւ Մովսէս վասն նորա. զի Զենոբ ի Պոսպայ ասէ թագաւորեալ Տրդատայ. եւ թագաւորեալ յորժամ զԳոթացն արար ձերբակալ զթագաւորն. եւ նա երախտահատոյց լեալ Տրդատայ՝ թագ եղեալ թագաւորեցոյց զնա, եւ առաքեաց զօրօք իւրովք ի Հայս: Իսկ Մովսէս ի Դիոկղետիանոսէ՝ ասէ՝ թագաւորեալ, վկայէ եւ այսմ Գիրք Կայսերացն»⁹: Արդ, շատ պատմադէտներ հակամէտ եղած են՝ այս վկայութեան վրայ հիմնուելով՝ Տրդատի թագաւորութեան առաջին տարին տանիլ 278, որ է Պրորոսի երրորդ տարին (276-

9. Ուխտանէս Եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 111:

8. Մ. խորենացի, Անդ, էջ 345-6, 376:

281) : Այսպէս վերջին անգամ Ե. Քասու-
նի, որ այդ պատճառաւ՝ Գրիգորի ձեռնա-
դրութեան թուականը կը դետեղէ 294ին :

5. — Բայց կար տակաւին պատմական
ուրիշ վկայութիւն մըն ալ Տրդատի թա-
գաւորութեան տարին սահմանող : Սերէո-
սի անունով ընդհանրացած պատմութեան
Գ. զլուխին նոսնուկն ցանկին մէջ պահ-
ուած վկայութիւնն է ան. ուր Տրդատի
թագաւորութեան համար կ'ըսուի. «Յա-
մին Լեւորդի Արտաշիւրի, հնգետասանե-
րորդի Դիոկղետիանոսի, կայսերակերպ
չքեղութեամբ Տրդատիոս ելանէ ախոյեան
ընդդէմ արքային Գթաց : Եւ անդէն ձեռ-
բակալ արարեալ զախոյեանն անարի ըզ-
թագաւորն Գթաց՝ ածեալ կացուցանէ
յանդիման կայսերն Դիոկղետիանոսի. եւ
անդէն ի նմին ամի թագաւորեցուցանէ
Դիոկղետիանոս զՏրդատ ի վերայ աշխար-
հիս Հայոց : Գումարէ ի ձեռս սորա զաւրս
բազումս, եւ արձակէ յերական իշխա-
նութիւն աշխարհին Հայոց»¹⁰ : Այս վկա-
յութեան համաձայն՝ Տրդատ թագաւո-
րած է Դիոկղետիանոսի 15րդ տարին, այն
է 298ին. իսկ Գրիգոր Լուսաւորչի ձեռ-
նագրուած է 315ին : Այս է Մանանդեանի
պաշտպանած կարծիքը : Հետեւաբար,
պատմական երեք տարբեր վկայութիւննե-
րու կը համապատասխանեն երեք տարբեր
կարծիքներ՝ Գրիգոր Լուսաւորչի ձեռնա-
դրութեան թուականը որոշող :

6. — Բայց ինչպէս տեսանք՝ կայ չոր-
րորդ կարծիք մըն ալ, զոր Հ. Ն. Ակի-
նեան առաջարկած է, եւ որուն համա-
ձայն՝ Հայոց քրիստոնէութեան դարձը
219ին կը տարուի : Ակինեանի այս կար-
ծիքն ալ ունի իր պատմական վկայութիւ-

նը : Անկա Փաւստոս Բիւզանդացիի պատ-
մութիւնն է, ուր Գրիգոր Լուսաւորչի մա-
սին անուղղակի տեղեկութիւններ կան.
վասնդի Փաւստոս իր պատմութիւնը կը
սկսի Գրիգորի յաջորդով, Արիստակէսով,
եւ զրեթէ ամբողջ Գ. դարու պատմու-
թիւնը կ'ընէ : Եթէ Փաւստոս ունենար ըս-
տոյգ եւ հաստատուն ժամանակագրու-
թիւն մը, անոր պատմութիւնը մեծապէս
կրնար նպաստել մեր հարցին լուծման :
Բայց Փաւստոսի պատմութեան ալ, Ազա-
թանդեղոսինն նման, կը պակսի ժամա-
նակագրութիւնը : Հարկ է զայն կազմել
իր տուած պատմական տուեալներու վը-
րայէն : Այդ տեղեկութիւններուն մէջ՝ Հ.
Ակինեան դրած է հատ մը, որուն վրայ
հիմնուած՝ ամբողջ Գ. դարու Հայոց
թագաւորներու ժամանակագրութիւնը յե-
ղաշնած է, եւ անկէ ջնջած Տրդատ Գ.ի
գոյութիւնը : Ասկից՝ Հ. Ակինեանի կար-
ծիքին մէջ Տրդատի թագաւորութեան ա-
ռաջին տարուան մասին հարց. չկայ :

Փաւստոս իր պատմութեան Գ. դարու-
թեան ԻԱ. գլխուն մէջ¹¹ կը պատմէ Տի-
րան թագաւորի ժամանակ տեղի ունեցած
պատերազմը ընդմէջ Պարսից Ներսէս ար-
քային եւ Յունաց կայսեր՝ Հայաստանի
մէջ, ուր Ներսէս պարտուելով՝ յանձն
կ'առնէ Յունաց կայսեր բոլոր պահանջ-
ները : Այս պահանջներուն մէջ գլխաւորը
այն էր որ զերի բռնուած Տիրան Հայոց
թագաւորը վերադարձուէր Հայաստան,
եւ անոր որդին Արշակ՝ թագաւոր ըլլար
Հայոց : Արդ, Ներսէսի եւ Յունաց կայսեր
միջեւ տեղի ունեցած այս պատերազմը
հանդիպած է 298ին, եւ անոր արդիւնք
եղած է 40ամեայ խաղաղութեան դաշին-

քը, ինչպէս կը պատմեն օտար պատմիչ-
ներ¹² : Փաւստոսի ըրած նկարագրութիւնը
յիշեալ պատերազմի մասին, այնպէս կը
համապատասխանէ՝ իր մանրամասնու-
թիւններով՝ օտար պատմիչներու ըրածին,
որ տարակոյս չի մնար թէ Փաւստոսի նը-
կարագրածը 298ի պատերազմն է : Եւ ո-
րովհետեւ Փաւստոս այս պատերազմին
հետեւանքով Արշակի թագաւոր ընտրուիլը
կը պատմէ, ուստի 298 թուականը հիմ
առնելով՝ իրեւ Արշակ թագաւորի առա-
ջին տարին՝ Հ. Ակինեան կը յեղաշնջ
անկէ առաջ եւ վերջ եկող թագաւորներու
ժամանակագրութիւնը, ինչպէս նաեւ ա-
նոր հետ կապ ունեցող կաթողիկոսներու
Գաւազանագիրքը : Եւ այս հիման վրայ կը
հասնի այն եզրակացութեան՝ թէ Հայոց
քրիստոնէութեան դարձը տեղի ունեցած
է 219ին :

Ահա այսպէս մեր պատմական աղբիւր-
ները՝ Ազաթանդեղոս, Փաւստոս, Մ. Խո-
րենացի, Սերէոսի անունով հրատարակ-
ուած պատմութիւնը, Ուխտանէս, իրար-
մէ տարբեր տեղեկութիւններ տալով՝ կը
բանան դուռը ներկայ ուսումնասէրներու
կարծիքներու տարբերութեան :

Հարկ է սակայն տեսնել այդ կարծիք-
ները իրենց ամբողջութեան մէջ, բերուած
փաստերով միասին, աւելի ճշգրիտ դա-
դարաբար մը կազմելու համար, եւ միաժա-
մանակ որպէսզի աւելի հստակացի դառ-
նան մեր տալիք հերքումները :

ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆԻ ԿԱՐԾԻՔԸ

Ինչպէս ըսինք՝ Մալխասեան Հայոց
դարձի թուականը կը համարի 279 տա-
րին : Այս եզրակացութեան յանգած է ինք՝
հիմնուելով Մովսէս Խորենացիի ժամա-
նակագրութեան վրայ : Մեծանուն բանա-
սէրին համաձայն, «Այս հարցին միակ եւ
ապահով աղբիւրը Խորենացու պատմու-
թիւնն է որ հետաքրքրուած է ժամանակա-

դրութեամբ»¹³ : Այսպէս դատած էին նաեւ
հիւսիսը : Սակայն անոնք, հիմնուելով Խո-
րենացիի բացատրութեան վրայ՝ թէ Տրդ-
դատ թագաւորած է Դիոկղետիանոսի եր-
րորդ տարին, եւ Գրիգոր՝ Տրդատի 17րդ
տարին նստած է առաքելական աթոռին
վրայ, Տրդատի թագաւորութեան սկիզբը
կը դնէին 287ին, իսկ Գրիգոր Լուսաւորչի
ձեռնագրութեան տարին՝ 302ը կամ 304ը,
Դիոկղետիանոսի թագաւորութեան տարին
առնելով ուղիղ ժամանակագրութեանէն
(284-305) : Մինչ Մալխասեան բոլորովին
տարբեր ճամբայ կը բռնէ : Ան հաշուելով
Տրդատ թագաւորի սկիզբէն մինչեւ Ար-
տաշէս՝ Արշակունի վերջին թագաւորին
անկումը, ինչպէս նաեւ Ս. Գրիգորի ձեռ-
նագրութեան տարիէն մինչեւ Ս. Սահակի
մահը, հետեւելով Մ. Խորենացիի ժամա-
նակագրութեան, կը գտնէ 163 տարի՝
թագաւորներու համար, եւ 160 տարի՝
կաթողիկոսներու : Եւ որովհետեւ թէ՛ Ար-
տաշէսի դահնկէցութեան տարին եւ թէ՛
Ս. Սահակի մահուան թուականը որոշ եւ
ստոյգ է պատմութեան, այսինքն՝ 428
Արտաշէսի անկումն, եւ 438՝ Ս. Սահակի
մահուան, պակսեցնելով վերոյիշեալ թի-
ւերը այս թուականներէն՝ կ'ունենայ
428 - 163 = 263 տարին՝ սկիզբ Տրդատի
թագաւորութեան, եւ 438 - 160 = 279՝
Գրիգոր Լուսաւորչի ձեռնագրութեան կամ
Հայոց դարձի թուական :

Նոյն թուականները ուրիշ հաշուով մըն
ալ կը հաստատուին : Այսինքն՝ սկսելով
Պարթեւաց Արտաւան Ե.ի սպանութեան
տարիէն, որ պատահեցաւ՝ ըստ ուղիղ
ժամանակագրութեան՝ 226ին¹⁴, Խորենա-
ցիի պատմութեան համաձայն՝ կ'անցնին
նախ տասը տարիներ, որոնց ընթացքին՝
Հայոց Խոսրով թագաւորը կը պատերազմի
Արտաշիւր Սասանեանի դէմ. ապա կը
սպաննուի Անտիոքի եւ Հայաստան կը դը-
րաւուրի Պարսիկներէն, 26 տարի Արտա-

10. Սերէոս (Եպիսկոպոս, Պատմութիւն, (հրա-
Մալխասեանի), Երեւան, 1939, էջ 15 :

Սերէոսի պատմութեան հեղինակի մասին կա-
րեւոր սրբագրութիւն մը բրած է վերջերս Գ.
Աբգարեան (տես Բանբեր Մատենադարանի,
4 [1958, Երեւան], էջ 61-72.) ցոյց տալով
թէ այդ պատմութեան հեղինակը, ոչ թէ Սե-
րէոսն է, ինչպէս առաջին հրատարակիչը հա-

մարած է, այլ՝ Խոսրով կամ Խոսրովիկ անուն
պատմագիրը, ապրած է. դարուն, Հռիփսիմէի
տաճարին վանականներէն մին : Մեր ուսում-
նասիրութեան մէջ պիտի շարունակենք յիշել
Սերէոսի անունը, քանի տակաւին Արգարեանի
սրբագրութիւնը չէ ընդհանրացած :

11. Փաւստոս Բիւզանդ, Պատմութիւն Հայոց, Գ.
դար. ԻԱ. Վենետիկ, 1933, էջ 64-68 :

12. Հմմտ. Մանանդեան, Անդ, էջ 106-110 :

13. Մալխասեան, Անդ, էջ 22 :

14. Այսպէս կը հաշուէ Մալխասեան, մինչ ըն-

դուռուած թուականը 224 է : ՏԵՍ ՆԷՕԼԴԷՔԷ,
Պատմութիւն Սասանեան Տէրութեան, (Թրդ-
Բարամեան), Վաղարշապատ, 1896, էջ 6 :

չիրէն եւ տարի մըն ալ Շապուհէն, միշտ համաձայն Մ. Խորենացիի. յետոյ Տրդատ Հռոմայեցւոց օգնութեամբ կը մտնէ Հայաստան եւ կը դրաւ Հայրենի ժառանգութիւնը: Ուստի այս հաշուով ալ (այն է $226 + 10 + 26 + 1 = 263$) կը դառնայ Տրդատի թագաւորութեան սկիզբը, 263ին:

Բայց կը մնար դժուարութիւն մը: Մ. Խորենացի յայտնի կերպով Տրդատի թագաւորութեան սկիզբը կապած է Դիոկղետիանոսի երրորդ տարւոյն հետ, այն է 287ին: Ի՞նչպէս հաշուեցնել ասիկա նախորդ եղբայրացութեան հետ: Մալխասեան շատ լաւ աշխատած է այս դժուարութիւնը լուծելու, եւ անով աւելի եւս հաստատած է իր փաստարկութիւնը: Ան կ'ընդունի թէ Մ. Խորենացին սխալած է Հռոմայեցի եւ Բիւզանդացի կայսրներու ժամանակագրութեան հաշուին մէջ, 23-26 տարի ետ տանելով՝ քան իրական ժամանակագրութիւնը: Եւ այս սխալին պատճառը թիւրիմացութիւն մըն է, որուն դո՛ւ դացած են ուրիշներ ալ: Այսպէս, Սեբէոսի վերաբերումը պատմութեան մէջ, Հայոց առ Կոստանդին Բ. դրած նամակին սկիզբը նոյն սխալը կրկնուած է, ինչպէս անդրադարձած է Մալխասեան: Հոն ըսուած է «Յամին ԺԳ՝ երեքտասներորդի կենարարին եւ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի թագաւորէ Դիոկղետիանոս»¹⁵: Այս կենարարին կոչուած թուականը ուրիշ բան չէ՝ եթէ ոչ Յ. Ք. 247ին սկսող Յունաց քուականը, կամ որ նոյն է՝ Հռոմի շինութեան Ա. Հաղարամեակին լրանալուն սկսող 1001 տարին, որ համապատասխան համար մէկ թուականով կը սկսի դործածուիլ: Այս թուականի սկզբնաւորութիւնը վիճար ֓իլիպպոս կայսեր (244 - 248) ժամանակ. Հայերը սխալմամբ կը համարին թէ նոյն թուականի 13րդ տարին թագաւորած ըլլայ Դիոկղետիանոս, որ է 260ին: Ուստի զարմանալի չէ որ Խորենացին հետեւելով Դիոկղետիանոսի թագաւորութեան այս իրեն ծանօթ սխալ թը-

ւականին, Տրդատի թագաւորութեան ըսկիզբը դնէր Դիոկղետիանոսի երրորդ տարին, որ նոյն հաշուին համաձայն պիտի դար 263ին: Ուրեմն այս դժուարութեան լուծումն ալ կը հաստատէ՝ թէ Տրդատ թագաւորած է 263ին. եւ Գրիգոր Լուսաւորիչ Հայերը քրիստոնեայ դարձուցած՝ 279ին:

Ըսելու է որ Մալխասեանի հաշիւները չիտակ են եւ լաւ աշխատուած. սակայն իր տուած բացատրութիւնը կը ծառայէ միայն արդարացնելու Խորենացիի կազմած ժամանակագրութեան ներքին կանոնաւորութիւնը եւ հետեւականութիւնը, բայց չի ծառայեր ստոյգ ժամանակագրութիւնը ճշտելու: Որովհետեւ եթէ ճիշտ է թէ Խորենացի հետաքրքրուած է ժամանակագրութեամբ եւ անշուշտ դրած նաեւ ստոյգ վաւերագրեր ժամանակագրական տուեալներով, սակայն ինք մի միայն իր դրածը չէ որ կու տայ մեղի՝ այլ նաեւ կ'աշխատի անոնց վրայ եւ իր գիտութեան համաձայն՝ կը մեկնէ ու կը դասաւորէ դանոնք. մինչ այսօր մեր պատմական գիտութիւնը եւ աղբիւրները աւելի ընդարձակ են եւ աւելի ապահով: Ուստի օգտագործելով հանդերձ Խորենացին՝ չենք կրնար միայն իրեն վստահիլ եւ անտեսել բոլորովին ուրիշ պատմագիտներու ժամանակագրական ցուցմունքները:

Առ այժմ կը բաւէ հոս ցոյց տալ Մալխասեանի հանած թուականին մեծ անյարմարութիւնը՝ չհիմնուելու համար միայն Խորենացիի վրայ: Եթէ ընդունինք Տրդատի թագաւորութեան սկզբնաւորութիւնը 263ին, եւ Գր. Լուսաւորիչի ձեռնագրութեան տարին 279ին, հետեւելով Մ. Խորենացիի եւ Մալխասեանի ժամանակագրութեան, Ս. Գրիգորի յաջորդը՝ Արիստակէս՝ Կաթողիկոս եղած պիտի ըլլայ 308-315. վասնզի Խորենացիի համաձայն՝ Գրիգոր Լուսաւորիչ երեսուն տարի կատարեց իր պաշտօնը, ուրեմն 279-308. Իսկ Արիստակէս եօթ տարի, որով 308-315, ինչպէս Մալխասեան ալ կը հաստատէ: Բայց այս պարագային, ի՞նչպէս հաշուե-

ցնել Արիստակէսի մասնակցութիւնը Նիկիոյ ժողովին (325): Եղելութիւն մը՝ որուն վրայէն չենք կրնար անցնիլ, վասնզի ոչ միայն Մ. Խորենացին կը պատմէ զայն, այլ նաեւ կը վկայէ անոր՝ զանազան լեզուներով հասած Նիկիոյ ժողովի Հայրերու անուանացանկը, ուր յայտնի կը կարգացուի Արիստակէսի անունը¹⁶:

Ուստի միակ այս անյարմարութիւնը բաւական է ըսելու համար՝ թէ Մալխասեանի վեր հանած Հայոց դարձի թուականը չի կրնար ստոյգ եւ պատմական թուականն ըլլալ:

Ե. ՔԱՍՈՒՆԻԻ ԿԱՐԾԻՔԸ

Քասունիի համար Հայոց քրիստոնէութեան դարձը տեղի ունեցած է 291ին, իսկ Գրիգոր Լուսաւորիչի ձեռնադրութիւնը՝ 294ին: Այս թուականը հետեւեալ ձեւով դրած է ան: Հիմնուելով Աղաթանգեղոսի վրայ՝ Խորենացի մեծի թագաւորութեան չըջանը նշած կը համարուի Արտաշիւրի ապստամբութեան ժամանակ. իսկ անոր սպանութիւնը տեղի ունեցած է 251ին, երբ Շապուհ յաղթելով Փիլիպպոս կայսեր՝ Միջագետքն ու Հայաստանը իր գերիշխանութեան տակ առաւ: Յաջորդ տարին, երբ մտաւ Հայաստան՝ Տրդատ անկէ փախաւ: Արդ, հետեւելով Մ. Խորենացիի հաշիւներուն, Տրդատի վերադարձը նշած ըլլալու է 27 տարի վերջ, որ է $251 + 27 = 278$ ին: Այս թուականին ի հաստատութիւն լաւ կը պատշաճի Ուխտանէսի վկայութիւնը, զոր Քասունի յիշած է, թէ «Զենոր ի Պոսպայ ասէ թագաւորեալ Տըրդատայ»: Եւ որովհետեւ Պոսպոս զահաւարած է 276-281, ուստի կ'արդարանայ Տրդատի թագաւորութեան թուականը

278ին: Յետ որոշելու Տրդատի թագաւորութեան տարին, զիւրին կ'ըլլայ Գրիգորի ձեռնադրութեան տարին որոշել, հետեւելով դարձեալ Խորենացիի հաշիւներուն, որով կը գտնենք 294:

Քասունիի ուսումնասիրութիւնը կը ներկայանայ շատ աւելի կատարեալ եւ աւելի բանաւոր լուծումներով: Վասնզի նկատի առած է հին աղբիւրներէն՝ Աղաթանգեղոս, Մ. Խորենացի եւ Ուխտանէս, եւ չէ սահմանափակուած միայն Խորենացիով, ինչպէս ըրած է Մալխասեան: Տուած լուծումներն ալ աւելի հաւանական են, փորկուած է Արիստակէսի ներկայութիւնը Նիկիոյ ժողովին, ինչ որ Մալխասեանի կարծիքին տկար կէտը կը կազմէր: Այնուհանդերձ այս կարծիքն ալ գոհացուցիչ չէ տակաւին: Վասնզի անտեսուած է բոլորովին Սեբէոսի վերագրուած պատմութեան վկայութիւնը, որուն համաձայն՝ Տրդատ Դիոկղետիանոսի 15րդ տարին է որ թագաւորած է: Բայց ինչ որ աւելի ծանր է, անտեսուած է նաեւ Աղաթանգեղոսի մէկ կարեւոր վկայութիւնը, որ մեր հարցին մէջ որոշիչ թուական կը հանդիսանայ. այսինքն Ս. Գրիգորի Կեսարիայէն դարձին՝ Աթանաղինէս վկային նշխարները բերելու պարագան: Այս վրկայութիւնը կարելի չէ անտեսել, որովհետեւ Ս. Գրիգորի դէպի Կեսարիա ճամբորդութեան նկարագրութիւնը Աղաթանգեղոսի մէջ՝ այնպիսի թարմութիւն եւ անմիջականութիւն ունի, որ յերկրածոյ ըլլալու երեւոյթ չունի: Արդ, Աթանաղինէս վկան 303ին նահատակուած է. հետեւաբար կարելի չէ Ս. Գրիգորի Կեսարիայէն դարձը դնել նախ քան այդ թուականը¹⁷: Հետեւաբար Քասունիի կարծիքն ալ ա'յս կողմէն անընդունելի կը մնայ:

16. H. Gelzer, Patrum nicaenorum nomina, Lipsiae, 1898:

17. Տաշեան, Աղաթանգեղոս առ Գեորգեայ Ասորի Եպիսկոպոսին, Վիեննա, (Աղգ. Մատ. Գ.) 1891, էջ 143: Աթանաղինէս վկային այրուած ըլլալու պարագան դժուարութիւն չի յարուցաներ անոր նշխարներու գոյութեան, վասնզի

իր վկայարանութեան մէջ յայտնի կերպով պատմուած է թէ մեծահարուստ կին մը, Եսսեթիա, գատաւորին թոյլտուութեամբ մարմինը կ'առնէ եւ նշխարները կը տանի իր գիւղը: (Տես վարք եւ վկայարանութիւն սրբոց, Հատ. Ա., Վենետիկ, 1874, էջ 64-65):

15. Սեբէոս, Անդ. Գլուխ ԽԳ. էջ 132:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆԻ ԿԱՐԾԻՔՆԸ

Հ. Ակինեան, ինչպէս ըսինք, Հայոց քրիստոնէութեան դարձի թուականը մինչեւ 219 ետ տարած է: Այս եղբայրացութեան հասած է ան երկու պատճառի համար:

1. — Առաջին պատճառն է Փ. Բիւզանդի Գ. Պարթևեանի ԻԱ. զուգահեռ պատմութիւնը, ուր կը նկարագրուի Պարսից Ներսէս (293-302) արքային պատերազմը Յունաց կայսեր դէմ եւ պարտութիւնը: Այս պատերազմին արդիւնքը կ'ըլլայ, ըստ Փաւստոսի, Տիրան թագաւորի գերութեանէն դարձը եւ որդւոյն՝ Արշակի, Հայոց թագաւոր կարգուելը՝ կայսեր պահանջով: Սակայն յոյն եւ հռոմայեցի պատմիչներու աւանդածին համաձայն՝ այս պատերազմը տեղի ունեցած է 298ին, Հայաստանի մէջ¹⁸. Հռոմայեցւոց զօրավարը Գաղերիոս կը կոչուի, մինչ Պարսից բանակին առաջնորդն է Ներսէս արքան: Պատերազմի նկարագրութեան մանրամասնութիւններն ալ ճշտիւ կը համապատասխանեն Փաւստոսի պատմածներուն: Կայսրը ծպտուած կը մտնէ Պարսից բանակը երկու զօրավարներով, կը քննէ դիրքերը, եւ յետոյ յանկարծական յարձակումով մը կը գրաւէ Պարսից բանակը, գերի բռնելով Արքային կինը եւ աղջիկները կամ լաւ եւս կանանոցը: Թագաւորը կը յաջողի փախչիլ: Բայց յաղթանակէն վերջ տեղի կ'ունենայ դաշինքը՝ հռոմայեցւոց պահանջներուն համաձայն: Փաւստոսի մէջ դաշինքին արդիւնքը եղած կը համարուի Արշակի Հայոց թագաւոր կարգուելը: Ուստի Հ. Ակինեան յենակէտ առնելով այս պարագան՝ կը կազմէ հայ թագաւորներու ժամանակագրական նոր ցուցակ մը, որուն համաձայն 298ին թագաւորած է Արշակ Բ. որդի Տիրանի: Եւ անկէ վեր ելլելով, Տիրան՝ որդի Սոսրոյու 298-284, Սոսրոյ՝ որդի Տրդատի 284-272. միջանկեալ օտար թագաւոր մը՝ Արտաւազդ,

272-253: Իսկ անկէ առաջ՝ Տրդատ Բ. որդի Սոսրոյ՝ Ա. 252-217: Սոսրոյ առաջին մեռած է 216ին, Միջագետք, բանտի մէջ: Իսկ Արշակ Բ. էն վերջ Հ. Ակինեան հետեւեալ ժամանակագրութիւնը կը կազմէ. Արշակ Բ. 298-338, Տիրան Բ. 339-349, Արշակ Գ. 349-368, Պապ 368-374: Հոս ներս կը մտնեն երկու նոր անուններ, զորս տտիպուած է ենթադրել:

Պատմական այս նոր ժամանակագրութեան, որուն առաջին մասը հիմնուած ըլլալով օտար աղբիւրներու վկայութեանց վրայ՝ ընդունելի է եւ լաւագոյնս կը լուսաբանէ այն մութ շրջանը քան նախորդ եղած փորձերը, Հ. Ակինեան միացուցած է կաթողիկոսներու Գաւազանագիրքը, յարմարեցուած այս նոր ժամանակագրութեան: Եւ որովհետեւ Տրդատ Գ. ջնջուած է իր արքայացանկին մէջ, Ս. Գրիգոր ժամանակակից եղած է Տրդատ Բ. 219էն սկսելով: Այս թուականին համար Հ. Ակինեան ունի ուրիշ կարեւոր փաստ մը, որուն մասին քիչ յետոյ: Այժմ տանք Գաւազանագիրքը համեմատուած արքայացանկին հետ:

Գր. Լուս.	(219-249)	Տրդատ Բ.	(217-252)
Մերութեան	(250-257)	Արտաւազդ	(253-272)
Վրքանէս	(257-272)		
Գրիգորիս	(272-289)	Սոսրոյ Բ.	(273-284)
Յուսիկ	(289-294)	Տիրան Ա.	(284-298)
Փառնիստի	(294-298)		
Արիստակէս	(298-338)	Արշակ Բ.	(298-338)
Ներսէս	(338-372)	Տիրան Բ.	(338-349)
Զոնակ			
(Սահակ-Հակարոյ)		Արշակ Գ.	(349-368)
Յուսիկ Բ.	(373-374)	Պապ	(368-374)

Այս նոր Գաւազանագիրքը արդիւնք է անշուշտ Հ. Ակինեանի կազմած արքայացանկին, որուն յենակէտ կը հանդիսանայ՝ ինչպէս տեսանք՝ Փ. Բիւզանդի վկայութիւնը, որուն համաձայն Արշակ՝ Տիրանի որդին՝ թագաւոր կարգուած է 298ին:

Թէեւ Հ. Ակինեան իր ուսումնասիրութիւնը տակէ չէ որ կը սկսի, սակայն կը համարիմ թէ աս է կեդրոնական փաստը իր նոր ուսումնասիրութեան, եւ իր եր-

կորդ պատճառն ալ ասկէ կը բղխի, որու մասին այժմ կ'ընանք խօսիլ քիչ մը աւելի երկարօրէն:

2. — Հ. Ակինեան իր ուսումնասիրութիւնը սկսած է զօրեղ քննադատականով մը Ագաթանգեղոսի պատմութեան դէմ, զոր հակասական եւ ժամանակագրութեամբ պակասաւոր կը դնէ: Եւ այս ժամանակագրական հակասութիւնները մի առ մի կը թուէ, զոր մէջբերել աւելորդ կը նկատենք: Ու կը յանդի այն եղբայրացութեան թէ Ագաթանգեղոսի գիրքը երկու խմբագրութիւն ունեցած է, մին Ե. դարուն, եւ միւրը Է. դարուն: Յայտնի չէ սակայն թէ երկու խմբագրութիւններն ալ հակասական եւ պակասաւոր ժամանակագրութիւն ունին, թէ ասիկա միայն երկրորդ խմբագրութեան արդիւնք է: Վասնզի երբեմն կը խօսի նախնական խմբագրութեան հետքերուն վրայ, որոնք մնացած են դեռ Ագաթանգեղոսի մէջ: Յետոյ սակայն տեսնելով որ Ղ. Փարսեցին, որ Ագաթանգեղոսի Ա. խմբագրութիւնը կը ճանչնայ, Ս. Գրիգորի մասին այնպիսի տեղեկութիւններ ունի, որոնք չեն յարմարի իր ներկայացուցածին, այդ Ա. խմբագրութիւնն ալ արդէն իսկ խանգարուած կը համարի: Ուստի իրեն համար, Ագաթանգեղոսի պատմութիւնը իբր պատմական աղբիւր՝ բոլորովին անպէտ կը հանդիսանայ: Մինչ Փ. Բիւզանդի մօտ կը դնէ աւելի հարազատ պատմութիւն. բայց այս պատմութիւնը միայն Ս. Գրիգորի Հայաստանի մէջ կատարած առաքելական վաստակն է: Քրիստոնէութեան դարձի բուն պատմութիւնը ուրիշ տեղ փնտռելու է: Եւ Հ. Ակինեան բախտը կ'ունենայ զայն գտնելու Գեղարիոս Կիւղիկեցիի եւ Ռուփինոսի մօտ, որոնք համարելով Վրաց դարձի պատմութիւնը ընէ՝ կ'աւանդեն Հայոց դարձի պատմութիւնը: Իրենց աղբիւրն ալ եղած է Բաղուր իշխանը (հայ կամ վրացի՝ կ'ըսէ Հ. Ակինեան):

Հոս կ'ամփոփենք այդ պատմութիւնը՝ համառօտելով Հ. Ակինեանի ուսումնասիր-

ութեան վրայէն: — Բաղուր իշխանն է պատմողը. Գերի կին մը կ'ապրի մայրաքաղաքին մէջ, խստակեաց կեանք մը. ան օտար է եւ քրիստոնեայ: Իր վշտամբեր կենցաղը զարմանք կ'արթնցնէ հեթանոսներու մէջ... Մայր մը իր հիւանդ զաւակը դռնէ դուռ կը շրջեցնէ՝ հարցնելով թէ ո՞վ կրնայ դեղ ու դարման գտնել իր հիւանդ զաւակին: Ճարահատ՝ կը բախէ օտարական կնոջ դուռը: Գերի կինը կը պատասխանէ. Նիւթական դեղ չեմ գտնիր, բայց յոյս ունիմ թէ իմ Աստուածս կը բժշկէ: Կ'առնէ հիւանդը իր խարաղին ներքեւ, կ'աղօթէ, եւ մանուկը կը բժշկուի: Բժշկութեան լուրը բերնէ բերան կը տարածուի մինչեւ արքունիք: Յետոյ կը հիւանդանայ թագուհին. երբ անօգուտ կ'ըլլան բժշկական հնարքները, կը դիմէ ինքն ալ գերի կնոջ, որ իրեն կը հարցնէ. Կը հաւատա՞ս իմ Աստուծոյս: Ու երբ թագուհին հաստատական պատասխան կուտայ, գինք ալ իր խարաղին ներքեւ կ'առնէ ու կ'աղօթէ, եւ թագուհին կը բժշկուի: Լուրը կը հասնի թագաւորին, որ կը փութայ նուէրներ զրկել, բայց գերի կինը կը մերժէ:

Ժամանակ մը վերջ՝ թագաւորը որսի կ'երթայ: Յանկարծ, որսի պահուն, պայծառ օրը կը սկսի նսեմանալ. թագաւորը զարհուրած՝ կը դիմէ իր աստուածներուն. անօգուտ. խաւարը աւելի կը թանձրանայ. կը մտածէ գերի կնոջ վրայ, որուն Աստուածը բժշկութիւն չնորհած էր իր թագուհին: Կ'աղօթէ անոր Աստուծոյն եւ կ'ուխտէ որ եթէ ողջամբ տուն վերադառնայ՝ ինք եւ իր ժողովուրդը Ասոր երկրապետներ պիտի ըլլան: Ասոր վրայ՝ խաւարը կ'անօրաւանայ եւ մթութիւնը կը փարատի. թագաւորը եւ որսակիցները տուն կը վերադառնան ուրախութեամբ:

Հ. Ակինեան կ'եղբայրացնէ. «Պատահած արեւու բոլորական խաւարում մըն էր, տեղի ունեցած 218 թուականի Հոկտ. 7ին, տեսնելի Հայաստանի մէջ ժամը 8. 20 - 11.04, թագոյն բարձրակէտը՝ ժամը

18. Տե՛ս Թան. Թիւ 12:



9-40ին»¹⁹. այսպէս ստուգած է Հ. Ակի-
նեան վիճենայի աստեղագէտի մը միջո-
ցաւ: Դիտն կատարուած պատմութիւնն ալ վկայու-
թիւն կը բերէ՝ թէ այդ խաւարումը ընդ-
հանուր սարսափ ազդած էր: Սակայն կա-
րեւոր եզրակացութիւնը դեռ հիմա է որ
պիտի հանէ Հ. Ակինեան. «Դժբախտա-
բար, կ'ըսէ ան, տեղեկատուն զգուշացած
է յիշել ո՛ր եւ է անուն միջավայրի կամ
անձի: Սակայն հայ աւանդութիւնը, որ
գրի առնուած է՝ հին աղբիւրէ օգտուե-
լով՝ 492ին, կը թույլատրէ անուններով
մատնանշելու միջավայրն ու անձերը»²⁰:
Այդ միջավայրը Հայաստանն է, թաղաւո-
րը՝ Տրդատ Բ. (217-252), թագուհին՝
Աշխէն, իսկ գերի կիներ՝ Հռիփսիմէ կոյսը:
3. — Գեղեցիկ է նաեւ տեսնել Ազա-
թանգեղոսի մէջ վերի պատմութեան հետ-
քերը, զոր Հ. Ակինեան վեր հանած է:
Ըստ հայ աւանդութեան, կ'ըսէ ան,
Հռիփսիմէի նահատակութենէն վեց օր
վերջ (այն է Սահմի 2ին, որ 444-447ին՝
կը համապատասխանէր Հոկտ. 7ին) թա-
ղաւորը որսի կ'երթայ, բայց տակաւին
չմեկնած՝ Տրդատի վրայ տարօրինակ հի-
ւանդութիւն կու գայ: Ահա որսորդու-
թեան պատմութիւնը, զոր Ազաթանգեղոս
խանգարած եւ յեղաշրջած է հիւանդու-
թեան դէպքին. մինչ սկզբնաղբիւրին մէջ
նկարագրուած ըլլալու էր խաւարումի
դէպքը, տիրող սարսափը եւն: Բակուր
իշխան կը պատմէ՝ թէ թաղաւորը որսէն
դարձին քրիստոնեայ կ'ըլլայ եւ եկեղեցի
մը շինել կու տայ, որուն շինութեան հա-
մար ութը սիւներ կը փոխադրեն, բայց
անոնցմէ մին տեղէն չի շարժիր. ուստի
գերի կիներ իր աղօթքով կը փոխադրէ՝
օգին մէջ կախուած: Հ. Ակինեան ասոր
համապատասխանը կամ լաւ եւս հետքը
կը գտնէ Ազաթանգեղոսի քով Հռիփսիմէի
եւ Գայիանէի վկայարաններու շինութեան
նկարագրութեան մէջ, ուր ութը սիւները

փոխադրողը Տրդատ թաղաւորն է, սիւ-
ներ՝ որոնցմէ իւրաքանչիւրը մէկ մարդ
առանձին էր կրնար շարժել: Ըստ Ազա-
թանգեղոսի՝ իւրաքանչիւր վկայարանին
մէջ չորսական սիւներ կը գետեղուին,
մինչ սկզբնաղբիւրին մէջ մէկ բաղիւրիկ եկե-
ղեցիի համար բերուած եւ չորս չորս եր-
կու կողմերը գետեղուած ըլլալու են, կ'ը-
սէ Հ. Ակինեան: Գերի կիներ, զոր այլեւս
Հռիփսիմէ անունով կը յիշէ միշտ Հ. Ա-
կինեան, թաղաւորին կ'առաջարկէ քահա-
նայ մը կամ հովիւ մը բերել տալ: Ազա-
թանգեղոսի մէջ ալ Ս. Գրիգորը նոյն բանը
կ'ըսէ. «Այս ամենայն յարգունական դան-
ձուն պահեալ կայցէ մինչեւ ձեզ հովիւ եւ
վարդապետ ի տեսչութենէ բարեբարու-
թեանն Աստուծոյ պարգեւեսցի»²¹:

4. — Գեղասիրտ եւ Ռուբինոս կ'ըսեն թէ
թաղաւորը Կոստանդիանոսի ղեկմամբ ըլ-
լայ՝ այդ հովիւը բերել տալու համար:
Բնական էր որ դէպքը 219ի առնանքը կա-
տարուած ըլլալով՝ չէ կարելի Կոստան-
դիանոս թաղաւորին ներկայութիւնը հոս
գետեղել: Ուստի Հ. Ակինեան հարցը կը
լուծէ ըսելով. «Ինձ կը թուի թէ հոս ա-
նունի շփոթութիւն կայ. Կեսարիա եւ
Կայսր շփոթուած են: Վասն զի քրիստո-
նեայ կոյսը քաջ գիտէր թէ քահանայի կամ
եպիսկոպոսի համար՝ ոչ թէ քաղաքական
իշխանութեան, այլ մերձակայ եկեղեցա-
կան մետրապոլիտի մը կը դիմուի»²²: Եւ
ահա Ազաթանգեղոսի մէջ ասոր հետքը,
որ կը պատմուի Գրիգորի Կեսարիա զըր-
կուիլը եւ հոն ձեռնադրուիլը Ղեւոնդիոս
մետրապոլիտէն: «Բնականաբար, կ'ըսէ
Հ. Ակինեան, Ազաթանգեղոսի աղբիւրին
մէջ չէր կրնար այս դէպքին Ղեւոնդիոս
յիշատակուած ըլլալ»²³: Ուստի պէտք է
ենթադրել անունի կամ շփոթութիւն կամ
խեղաթիւրում:

Բայց չստ աւելի գիտաւոր համեմա-

տութիւններն են հետեւեալ երկու պարա-
գաները, ուր Հ. Ակինեան՝ Ազաթանգե-
ղոսի մէջ կը գտնէ գերի կիներ մասին պատ-
մուածը Ս. Գրիգորի համար ըսուած:
Այսպէս երբ Գրիգոր վերապէն կ'ելլէ՝ դի-
ւահար թաղաւորը եւ իշխանները կը խըն-
դեն իրմէ. «Ոնդրեա զու վասն մեր յԱս-
տուծոյ քումմէ զի մի՛ կորիցուք: Իսկ կա-
պեալն Գրիգոր անդէն խօսել սկսաւ եւ
ասէ»:
Հ. Ակինեան կը խորհրդածէ:
«Սկզբնաղբիւրին մէջ հաւանօրէն խօսակ-
ցութիւնը Տրդատի եւ գերի կիներ մէջ էր.
ուշադրութեան արժանի է այս տեսակէ-
տով կապեալն Գրիգոր. կապանքները
բարձրուած էին արդէն. խօսքը ապահովա-
պէս գերի խմաստով է հոս»²⁴: Երկրորդ
նման համեմատութիւնը Հռիփսիմէի վախ-
ճանին մասին է, որուն համար թէեւ չգի-
տեմք, կ'ըսէ Հ. Ակինեան, բայց կ'աւել-
ցնէ. «Ազաթանգեղոս ունի տեղիքս. —
Իսկ թաղաւորն շատ աղաչեաց զԳրիգոր
վասն հանապազորդ առ նմա գալոյ, զի
ընդ ինքեան չընցուցէ, որում ոչ հաւա-
նեալ չառնոյր յանձն, այլ յանապատ տե-
ղիս հաճեալ բնակութեամբ պահովք կո-
խեալ զինքն: — Եթէ տեղիքս որ եւ է հին
բնադրի մը յարասութիւն է, կարող է մեր-
ձեցուիլ Հռիփսիմէի»: Որով կ'եզրակացնէ
թէ «Ան առանց տարակուսի մնաց Հայաս-
տան եւ հոն ալ վախճանեցաւ արքութեամբ
եւ յիշատակը յարգուեցաւ հայ ժողովուր-
դէն»²⁵:

Այս համեմատութիւններով, անշուշտ,
Մեծարդոյ բանասէր Հայրը կ'ուզէ ցու-
ցնել թէ ինչ եղած ըլլալու էր Ազաթան-
գեղոսի այժմեան խանգարուած բնադրին
սկզբնաղբիւրը, որուն կորիզը գտած է
Գեղասիրտի եւ Ռուբինոսի աւանդած՝ Բա-
կուր իշխանէն պատմուած վրաց դարձի
պատմութեան մէջ: Եւ որովհետեւ Բակուր
իշխանի պատմած որսի դացող անանուն
թաղաւորը Տրդատ Բ. ըլլալու է, ուստի
իր թաղաւորութեան շրջանին պատահած

արեւու խաւարման թուականը ճանչնա-
լով՝ կը գտնուի Հայոց դարձի թուականը,
որուն համար Հ. Ակինեան այսպէս եզրա-
կացուցած է. «Նկատի առնելով որ արեւի
խաւարումը տեղի ունեցաւ 218ի Հոկտ.
7ին, Հայաստանի քրիստոնէութեան դար-
ձը պատահեցաւ Տրդատի թաղաւորու-
թեան առաջին տարիներուն. Հռիփսիմէի
նախապատրաստութիւնները պահանջեցին
իր տարի մը. կրնանք Գրիգորի Հայաս-
տան հասնիլը 219/20 տարւոյն նշանակել.
այսպէս կ'ենթադրէ նաեւ Հայոց եպիսկո-
պոսապետներու Գաւաղանազարի ժամա-
նակագրութիւնը, Գրիգորէն մինչեւ Փառ-
նեսէն»²⁶:

Հ Ե Ր Ք Ո Ւ Մ

Այս վերջին խօսքերէն սրազ կը տեսնուի
թէ գլխաւոր կռուանը՝ որուն վրայ Հ. Ա-
կինեանի ենթադրութիւնը հիմնուած է՝ իր
կազմած Գաւաղանազարէն է: Իսկ Գաւա-
ղանազարին հիմը, ինչպէս տեսանք, Փա-
ւաղատի Գ. զպրութեան ԻԱ. գլուխին ա-
ւանդած պատմութիւնն է, ուր Ներսէս
պարսից արքան (292-302) ժամանակակից
համարուած է Տիրան Հայոց թաղաւորին,
եւ 298ի նշանաւոր պատերազմին հետե-
ւանքով՝ Արշակ, Տիրանի որդին, Հայաս-
տանի թաղաւոր կարգուած:

Ուստի եթէ այս հիմը խախտու ըլլայ՝
պիտի ըսենք թէ Հ. Ակինեանի շինած ամ-
բողջ շէնքը հաստատուն չէ: Վասնզի ինչ
որ Հայոց քրիստոնէութեան պատմութեան
մասին ըսած է՝ լոկ ենթադրութիւն մըն
է, շատ գիտաւոր եւ գեղեցիկ հնարաւո-
րութիւն մը, բայց առանց ոչ մէկ գրական
փաստի: Այնպէս որ եթէ իր կազմած Գա-
ւաղանազարի ժամանակագրութիւնը սը-
խալ է, այդ ենթադրութիւնն ալ ամբող-
ջովին անհնարին կը մնայ: Իսկ այն պա-
րագային որ իր կազմած ժամանակագրու-
թիւնը ուղիղ ըլլար՝ տակաւին իր ենթա-

19. Ակինեան, Անդ, էջ 37:

20. Ակինեան, Անդ, էջ 36 եւ 37:

21. Ակինեան, Անդ, էջ 41:

22. Ակինեան, Անդ, 41-42:

23. Ակինեան, Անդ, էջ 42:

24. Ակինեան, Անդ, էջ 39:

25. Ակինեան, Անդ, էջ 42-43:

26. Ակինեան, Անդ, էջ 42:

դրույթները կը մնար լուր հնարաւորութիւն, առանց դրական ապացոյցի:

1. — Տեւնէնք ուրեմն Փ. Բիւլանդի Գ. զարուծեան ԻԱ. զլուսի փաստը, որ, ինչպէս ըսինք, հիմը կը կազմէ Հ. Ակի-նեանի Արքայացանկին եւ Գաւազանազըր-քին: Վերը արդէն տեսանք թէ Փաւստոս այդ զլուսին մէջ 298ի պատերազմը կը նկարագրէ Ներսէս Պարսից արքային եւ Յունաց կայսեր միջեւ, իբրեւ տեղի ունեցած մեր Տիրան թագաւորի օրով: Ընդհանրապէս բանասէրները Փաւստոսի այդ վկայութեան կարեւորութիւն տուած չեն եւ իբրեւ պատմական սխալ մը համարած, ինչպէս նոյն զլուսին մէջ յիշուած Վաղէսի անունը, որ ոչ Ներսէսի եւ ոչ Տիրանի ժամանակակից է: Աստուրեան ուղած է մեկնել Ներսէսի անունն ներկայութիւնը Տիրանի ժամանակ՝ հետեւեալ ձեւով. Ներսէս Պարսից արքան, ոչ թէ 292-302 դահակալող արքայից արքան է, այլ 350ին Շապուհի օրով Հայաստան զրկուած Ներսէս զօրավարը, զոր կը յիշեն Ամմիանոս եւ Զոսիմոս, յոյն պատմիչները: Աստուրեան կը համարի թէ Ներսէս զօրավար թագաւորական ընտանիքի զաւակ եղած ըլլայ եւ պարսկական դաւառի մը կառավարիչ, եւ այդ պատճառաւ՝ արքայ տիտղոսով ճանչցուած: Ուստի Փաւստոսի յիշեալ զլուսին մէջ նկարագրուած է 350ի պատերազմը եւ ոչ թէ 298ինը²⁷:

Սակայն Փաւստոսի մէջ նկարագրուած

պատերազմի մանրամասնութիւնները այնպէս լաւ կը համաձայնին ժամանակակից յոյն կամ հռոմայեցի պատմիչներու 298ի պատերազմի պարագաներուն հետ, որ դժուար է Աստուրեանի լուծումը ընդունիլ ամբողջութեամբ:

Մեզի շատ աւելի հաւանական կը տեսնուի ըսել թէ Փաւստոս յիշեալ զլուսին մէջ կը խօսի Տիրան թագաւորի ժամանակ՝ 350ի մօտերը տեղի ունեցած դէպքերու վրայ. բայց Պարսից եւ Հռոմայեցւոց միջեւ տեղի ունեցած պատերազմի նկարագրութեան համար փոխ առած է ժողովրդական բանաստեղծութիւնէն՝ Ներսէս արքային 298ի պատերազմի նկարագրութիւնը, որ անշուշտ հայ բանաստեղծներու նիւթ տուած էր, քանի որ պատերազմը տեղի ունեցաւ Հայաստանի մէջ եւ հայ բանակը իր զօրավարներով մասնակցեցաւ անոր: Յաղթանակը այնքան չքեղ էր՝ որ պիտի յաւերժանար ժողովրդական բանաստեղծութեան մէջ²⁸:

Թէ Փաւստոս Տիրան թագաւորի մասին խօսելով՝ աչքի առջեւ ունի 350ի դէպքերը, անկէ յայտնի է՝ որ պատմելով հայ պատգամաւորներու Բիւզանդիոն երթը, Յունաց կայսեր օգնութիւնը խնդրելու, մէջ կը բերէ Կոստանդիանոսի եւ Տրդատի միջեւ եղած դաշինքի յիշատակութիւնը: Արդ, եթէ Փաւստոս աչքի առջեւ ունենար 298ի դէպքերը՝ չէր կրնար յիշել Կոստանդիանոս կայսրը: Ուստի Փաւստոս երկու

27. Աստուրեան, Քաղաքական վերաբերութիւնները մէջ Հայաստանի եւ Հռոմայ: Վենետիկ, 1912, էջ 281, Ծան. 1:

28. Փաւստոսի յիշեալ զլուսին մէջ պատերազմի նկարագրութիւնը անշատ եւ անկախ ըլլալու երեւոյթը ունի, սկսելով.

Ի կողմանց արեւելից խաղաց գնաց
Ինքն Ներսէս արքայն պարսից...

մինչեւ թագաւորին փախուստը. բայց միայն քաղաքը պրծեալ մագապուր Պեշապիկ մի սուրիանդակ առաջի պրծեալ ելանէր փախստական հազիւ ուրեմն կարէր անկանել հասանել յաշխարհ իւր: (Փ. Բիւզ. Գ, ԻԱ.)

Ամբողջ այս հատուածը ժողովրդական երգի զոյն ունի. եւ միայն իբրեւ միջարկութիւն ներս մտած են Արշաւիր եւ Անդովի իշխաններու անունները հոն ուր երգը կ'ըսէ.

Եւ ինքն ընտրեաց իւր արս երկուս գլխաւորս
Արս իմաստունս Հայաստան բանակէն,
(այսինքն զԱրշաւիրն եւ զԱնդովի...): Այս երկու անունները զուրս ձգելով՝ ամբողջ ներկարագրութեան մէջ ոչինչ կը մնայ Տիրան թագաւորի ժամանակը յայտարարող: Ներսէս թագաւորին պատերազմի պատմութիւնն է ան, Փաւստոսն օգտագործուած՝ Տիրանի ժամանակի դէպքերուն համար:

դէպքեր իրարու կը խառնէ, եւ խառնակ ու հակասական է իր ժամանակագրութիւնը այս կէտին մէջ: Եւ հետեւաբար, կարելի չէ Փաւստոսի այս զլուսը հիմ ծառայեցնել՝ յեղաշրջելու համար Հայոց արքայացանկին եւ կաթողիկոսներու Գաւազանազըրին ժամանակագրութիւնը:

2. — Այժմ անցնինք նկատելու Հ. Ակի-նեանի կազմած Գաւազանազըրքը, որ կը յեղաշրջէ հնագոյն Գաւազանազըրքերով հասած կաթողիկոսներու յաջորդութեան կարգը, տեւողութեան ժամանակը, հայ թագաւորներու հետ ունեցած զուգորդութիւնները, եւ կը ներմուծէ նոր անուններ:

ա) Այսպէս Ս. Գրիգորի յաջորդ նշանակուած է Մերութան Եպիսկոպոս մը, զոր մեր Գաւազանազըրքերը չեն ճանչնար, եւ շատ խնդրական է անոր Մեծ Հայքի Եպիսկոպոս ըլլալու պարագան:

բ) Արիստակէս եւ Վրթանէս ճանչցուած են մեր հնագոյն Գաւազանազըրքէն իբր օրդիւններ Ս. Գրիգորի եւ անոր անմիջական յաջորդները: Հ. Ակի-նեանի կազմած Գաւազանազըրքով կը դադրին այդպէս ըլլալէ:

գ) Բոլոր Գաւազանազըրքերը Արիստակէսի կաթողիկոսութեան տեւողութիւնը եօթը տարի գիտեն: Հ. Ակի-նեան 40 տարի կու տայ, ինչ որ ոչ մէկ պատմական փաստով չ'արդարանար, եւ կը մնայ լուր անթաղութիւն:

դ) Արիստակէսի ժամանակակցութիւնը Արշակ թագաւորի հետ՝ դրական ոչ մէկ վկայութիւն ունի. նմանապէս Ս. Ներսէսը յաջորդ նշանակել Արիստակէսին՝ չ'արդարանար դրական փաստերով:

ե) Հ. Ակի-նեանի կազմած Գաւազանազըրքին մէջ մտած է Գրիգորիս, որ Փաւստոսի՝ Հ. Ակի-նեանի վաւեր աղ-

բերին համաձայն, Աղուանից առաքեալ մը եղած է միայն:

զ) Այս Գաւազանազըրքը վիճեթադրէ արքայացանկ մը՝ ուսկից Տրդատ Գ. անունը վերցուած է. բայց Տրդատ Գ. ժամանակակից Կոստանդիանոս կայսեր գիտեն ոչ միայն Ազաթանգեղոս, այլ նաեւ Փաւստոս, որոնք կը յիշեն երկու թագաւորներու միջեւ տեղի ունեցած դաշինքը:

Տրդատի եւ Կոստանդիանոսի դաշինքի պատմականութիւնը կ'ընդունի մեծանուն Հ. Տաշեան²⁹, ինչպէս նաեւ բոլոր մեր պատմագէտները, վասնզի մեր հնագոյն պատմիչներն ալ յիշած են զայն զանազան պարագաներու: Այսպէս, Փաւստոս, Տիրան թագաւորի ժամանակ երբ հայ պատգամաւորներ Հայաստան կ'երթան օգնութիւն խնդրելու՝ մէջ կը բերեն Տրդատի եւ Կոստանդիանոսի միջեւ եղած դաշինքը³⁰: Նոյնը կը պատմէ Մ. Խորենացի՝ Խորով թագաւորի համար³¹: Իսկ Եղիշէ, վարդանանց պատերազմի առթիւ՝ երբ Հայքը կը դիմեն Թէոդոս կայսեր, կ'ըսէ. «Բազում մատենանք ի մէջ եկեալ ընթերցան որ զնոյն ուխտ հաստատութեան ի ներքս գտանէին»³²: Թէեւ Կոստանդիանոսի անունը չի յիշուիր, բայց ակնարկը յիշեալ դաշինքի մասին է: Մինչ Հ. Ակի-նեան բոլորովին կ'անտեսէ այս դաշնադրութեան պատմութիւնը եւ ոչ մէկ բացատրութիւն չի տար: Արդ, Կոստանդիանոսի եւ Տրդատի ժամանակակցութեան պատմականութիւնը բոլորովին կը հերքէ Հ. Ակի-նեանի կազմած թէ՛ արքայացանկը եւ թէ՛ Գաւազանազըրքը:

3. — Անցնելով այժմ Հ. Ակի-նեանի ներկայացուցած Հայոց դարձի նոր պատմութեան, պէտք է ըսել թէ որքան ալ գիտաւոր ըլլայ ան, սակայն շատ երեւակա-

29. Տաշեան, Անդ, էջ 146-147: Նմանապէս Մանուկեան, Անդ, էջ 129-130: Աստուրեան, Անդ, էջ 267-270:

30. Փաւստոս Բիւզանդ, Պատմութիւն Հայոց, Գ, Իա. էջ 65:

31. Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Գ, Ե. էջ 405:

32. Եղիշէ, վասն վարդանայ եւ Հայոց պատմութեան, Վենետիկ, 1893, էջ 183:

յական է: Եւ ինչպէս արդէն ըսինք, այնու
որ իր կազմած Գաւազանագիրքը հաստա-
տուն չէ՝ նովին իսկ դործով, իր ըրած
ենթադրութիւնն ալ՝ անհնարին կը դառ-
նայ: Այնու հանդերձ աւելի մօտէն տես-
նենք անոր տկար կողմերը,

Ինչպէս իսկոյն կը նշմարուի, Հայոց
դարձի այս նոր պատմութեան մէջ գլխա-
ւոր դերակատարը գերի կին մըն է, որ՝
Հ. Ակինեանի համաձայն՝ նոյն ինքն
Հռիփսիմէ կոյսը ըլլալու է: Արդ, ամէն
կարգացողի յայտնի կ'երեւի այս համե-
մատութեան բռնադրօսիկ երեւոյթը, եթէ
ընդունինք անշուշտ Հռիփսիմեանց պատ-
մութեան քանի մը հիմնական կէտերը: Եւ
բարեբախտաբար Մեծարդոյ Հայրը կ'ըն-
դունի ըսելով. «Որչափ ալ կասկածելի
համարինք վկայաբանութեան հարադա-
տութիւնը՝ չենք կրնար սակայն մերժել
Հռիփսիմէի եւ Գայիանէի գոյութիւնը
(ընդգծումը մերն է) եւ անոնց աղերսը
Հայաստանի հետ, որովհետեւ կանգուն են
մինչեւ այսօր Վաղարշապատի մէջ երկու
եկեղեցիներ յանուն Հռիփսիմէի եւ Գա-
յիանէի»³³: Եւ ասոր ի վկայութիւն նոյն
ինքն բանասէր Հայրը մէջ կը բերէ Փա-
ւրատոսի, Ղ. Փարպեցիի եւ Շուշանիկի
վկայաբանութեան հետեւեալ տեղիքները.
«Սոյնպէս եւ ի գաւառն Այրարատեան ըզ-
նախալկայան Բրիտոսի, ուր Գայիանէն
եւ Հռիփսիմէն կային, իւրեանց հանդերձ
դործակցօքն» (Փ. Բիւզ. Գ. ԺԴ): Իսկ
Ղազար պատմելով Վահանի մասին՝ կ'ըսէ
թէ «Կատարէին գուխտ եւ զնուէրս ի
սուրբ եկեղեցւոյ Կաթողիկէի եւ ասպա
յիւրաքանչիւր տեղիս նահատակելոց կու-
սանաց» (Ղ. Փարպեցի, ՂԷ): Ս. Շուշա-
նիկ իր աղօթքին մէջ կ'ըսէ. «Եւ արդ ի
քեզ ան յուսացեալ որ զսուրբն Հռիփսիմէ
փրկեցեր ի բարկութենէ թագաւորին եւ
զնա յամօթ արարեր» (Սոփեբք, Թ, 26):
Հետեւաբար այս վկայութիւններուն նա-
յելով միայն՝ Հայաստան եկած են ոչ թէ
գերի կին մը, այլ բազմութիւն մը կոյ-
սերու, որոնց վրաստորններն իսկ երկու են,

33. Ակինեան, Անդ, էջ 32:

Հռիփսիմէ եւ Գայիանէ, նահատակուած
քրիստոնէութեան համար՝ հեթանոս թա-
գաւորէն, ինչ որ ճշտիւ կը համապատաս-
խանէ Ագաթանգեղոսի տուած տեղեկու-
թեանց, զոր Հ. Ակինեան այսպէս կը հա-
մառօտէ. «Ագաթանգեղոսի համաձայն՝
Հռիփսիմէ եւ Գայիանէ եւ ուրիշ կոյսեր
Հռոմէն փախստական եկած են Հայաստան
եւ հոն Տրդատ թագաւորին հրամանով
նահատակուած»: Սակայն զարմանալի է
բանասէր Հօր հանած հետեւանքը՝ թէ
Ագաթանգեղոս ցոյց չի տար որ անոնք
քրիստոնէութեան համար նահատակուած
են, այլ պարզապէս անոր համար որ
Հռիփսիմէ յանձն չէ առած Տրդատի կին
ըլլալ»³⁴: Անշուշտ Հ. Ակինեան չ'ուզեր
ենթադրել թէ Հռիփսիմէ մերժած ըլլայ
Տրդատի կին ըլլալ՝ պարզապէս անոր
հաւանած չըլլալուն համար(!): Արդ, Հ.
Ակինեան մէկ կողմէն կ'ընդունի Հռիփսի-
մեանց կոյս նահատակներու գոյութիւնը,
զոր «կարելի չէ մերժել» կ'ըսէ. միւս կող-
մէն այնքան կ'այլափոխէ անոնց դիմադի-
ծը, ջանալով նոյնացնել Հռիփսիմէի եւ
գերի կնոջ անձն ու դործունէութիւնը, որ
ասով աւելի դժուարին է ընդունիլ քան
մերժել Հռիփսիմեանց գոյութիւնը. միա-
սընդի գերի կնոջ պատմութեան մէջ ո'չ
մարտիրոսութիւն կայ, ոչ Գայիանէ եւ
ոչ ընկերներ: Չէր ալ կրնար նահատակ-
ուիլ գերի կինը, որովհետեւ թագաւորը
զինք վը պատուէ եւ նէ ճգնաւորական
կեանքի նուիրելով ինքզինք՝ կը մեռնի
առանձնութեան մէջ սրբութեամբ, եւ յի-
շատակը կը յարգուի հայ ժողովուրդէն:
Ուրեմն ինչո՞ւ չ'իյնուած են Վաղարշապա-
տի հայ վկայաբանները. ինչո՞ւ Ղազար
Փարպեցի Նախատակ կոյս կը կոչէ, Փա-
ւրատոս ալ Նախալկայ. ի՞նչ իմաստ ունի
Շուշանիկի աղօթքը թէ Փրկեցեր գաւրբն
Հռիփսիմէ ի բարկութենէ թագաւորին: Հ.
Ակինեանի բերած պատմութեան մէջ թա-
գաւորը բարկանալու պատճառ չ'ունի,
ընդհակառակն անոր շնորհապարտ է:

Նոյնը ըսելու ենք Ս. Գրիգորի համար

34. Ակինեան, նոյն տեղը:

ալ, որ՝ ըստ Հ. Ակինեանի վեր հանած
պատմութեան՝ Տրդատ թագաւորի խըն-
դրանքով Կեսարիայէն զրկուած առաքեալ
մըն է, Հայաստան եկած՝ կաղմակերպե-
լու համար գերի կնոջ ձեռքով կատարուած
Հայոց դարձը, զոր կը կատարէ առանց
դժուարութեան եւ նեղութեան. պարզա-
պէս եկած է քաղելու ուրիշին ցանածը:
Ո՞ւր են Գրիգորի չարչարանքները, բանո-
ւարկելումը: Եւ սակայն Փաւստոս եւ Ղա-
զար լաւ գիտեն թէ Ս. Գրիգոր «Բազում
փիլիսոս» կրած է եւ այդ պատճառով Ղ.
Փարպեցի զինք կը կոչէ «Նահատակ եւ
առաքեալ»: Ս. Վարդան իր զինուորնե-
րուն կը յիշեցնէ. «Ջարչարանս Ս. Գրի-
գորի», ըսելով. «Յիշել պարտ է եւ զմը-
տաւ ածել զփիլիսոսն եւ զնեղութիւնսն,
զբանտն եւ զկապանսն սրբոյն Գրիգո-
րի»³⁵: Փ. Բիւզանդի քով ալ Դանիէլ յան-
դիմանելով թագաւորը եւ արքունական-
ները՝ կ'ըսէ. «Հարճն ձեր զնորին առա-
քեալն սպանին եւ զհետ նորա նորին նը-
մանին չարչարեցին վասն նորին իրաց»³⁶,
ակնարկելով Ս. Գրիգորը:

Ի՞նչ ըսել Հ. Ակինեանի նորագիւտ
պատմութեան հետքերուն մասին՝ որ իբր
թէ Ագաթանգեղոսի մէջ մնացած են, զոր
բանասէր Հայրը վեր կը հանէ: Բայց ա-
նոնցմէ չ'առնուին մէջ նմանութիւններ
գտնելու համար՝ հարկ կ'ըլլայ ենթադրել
անուններու, անձերու եւ դերերու փոփո-
խութիւն կամ չ'փոփոխել: Այսպէս «Կա-
պեալն Գրիգոր բացատրութեան մէջ՝ են-
թադրել Գ. Ե. Ի. իմաստով Հռիփսիմէի
տիտղոսը: Գրիգորի ճգնաւորական կեան-
քի պատմութեան մէջ՝ ենթադրել որ ան
Գերի կնոջ մասին ըսուած ըլլայ: Կոստան-
դիանոս կայսեր անունը Կեսարիա անու-
նին հետ չ'փոփոխուած համարել:

Ե Զ Ր Ա Կ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն

Յարգելով հանդերձ Մեծարդոյ բանա-
սէր Հօր բնագրական հմտութիւնը եւ նուրբ
սրամտութիւնը՝ լուծելու համար հայ ե-
կեղեցական պատմութեան կարեւորագոյն
եւ դժուարին մէկ հարցը բոլորովին նոր

համբով, չենք կրնար ընդունիլ իր տեսու-
թիւնները:

Որովհետեւ իր մոծած յեղաշրջումը,
ըլլայ կաթողիկոսներու Գաւազանագրքին,
ըլլայ արքայացանկին մէջ, յեցած է Փա-
ւրատոսի միակ եւ խախտու ժամանակա-
գրական տուեալի մը վրայ, որ՝ ինչպէս
տեսանք՝ ժողովրդական բանաստեղծու-
թենէ քաղուած ըլլալով, ա'յնքան արժէք
կը ներկայացնէ՝ որքան Ագաթանգեղոսի
պատմական մասին ժամանակագրութիւնը,
զոր իրաւամբ Հ. Ակինեան հակասական եւ
պակասաւոր կը գտնէ: Բայց Փաւստոսի
յիշեալ գլուխին ժամանակագրութիւնն ալ
հակասական է. մասնով հոն կը յիշուի
Տրդատի եւ Կոստանդիանոսի դաշինքը,
որուն հիման վրայ Յունաց կայսրը Հա-
յաստան կու գայ պատերազմելու Պարսից
դէմ: Միւս կողմէն Պարսից արքան՝ ու-
րուն դէմ կը պատերազմի Յունաց կայսրը՝
կը կոչուի Ներսէճ, հակաժամանակեան
կերպով:

Երկրորդ, իր կազմած արքայացանկին
մէջնէն դուրս մնացած է Տրդատ Գ. եւ ա-
նոր տեղը փոխանակած են Տիրան Ա. եւ
Արշակ Բ. նոր անունները: Բայց Տրդատ
Գ. ի գոյութեան՝ իբր ժամանակակից
Կոստանդիանոս կայսեր, կը վկայեն մեր
պատմիչները՝ զանազան առիթներու մէջ
յիշելով երկու թագաւորներու միջեւ ե-
ղած դաշինքը: Այսպէսով հիմնովին կը
հերքուի Հ. Ակինեանի կազմած արքայա-
ցանկի ժամանակագրութիւնը եւ անոր
հետ կապուած Գաւազանագիրքը:

Հուսկ անհիմն կը մնայ Հայոց դարձի
պատմութիւնը, քաղուած Ռուբինոսէ եւ
Գեղասիոս Կիւզիկեցիէ, որոնք գերի կնոջ
կը վերագրեն Վրաց դարձի առաքելութիւ-
նը. իսկ Հ. Ակինեան զայն կը յարմարցնէ
Հայոց դարձին:

Հ. ՊՕՂՈՍ ԱՆԱՆԵԱՆ

(Շարունակելի)

35. Ղ. Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Վենե-
տիկ, 1933, էջ 63-64:

36. Փ. Բիւզանդ, Անդ, էջ 50: